ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2024 թվականի մարտի 7-ի թիվ 3 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը «ԷԱՃԱՊՁԲ-2024/8-3-ԵՊԲՀ»

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար համակարգիչների, համակարգչային սարքերի և պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԷԱՃԱՊՁԲ-2024/8-3-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2024 թվականի մարտի 5-ին ստացված հարցադրումները և դրա վերաբերյալ 2024 թվականի մարտի 7-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1: Հարգելի գործընկեր, Խնդրում ենք տալ պարզաբանում հետևյալ չափաբաժինների համար՝ - Չափաբաժիններ 6, 7 և 8: Ձեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը Հրավերի հայերեն տեքստում անգլերեն լեզվով են, որով խախտվել է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները: Խնդրում ենք իրականացնել համապատասխան թարգմանությունները և կատարել փոփոխություն: - Չափաբաժիններ 6, 7 և 8 Տեխնիկական բնութագրերում գնման առարկայի բնութագրիչներում բացակայում են «ոչ ավել» և «ոչ պակաս» չափորոշիչները: Այդպիսով խախտվում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի ,,Գնումների մասին,, ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները համաձայն որի Գնման առարկայի բնութագրերը՝ - 1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար. - 2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը. - 3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը. - 4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:: Խնդրում ենք կատարել փոփոխություններ ապահովելու մեկից ավելի անձանց մասնակցությունը գնման գործընթացին կատարելով համապատասխան փոփոխությունները: - ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման հավելված 1-ի կարգի 22-րդ կետի համաձայն Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ..... - Չափաբաժիններ 6, 7 և 8: Ձեր կողմից նշված տեխնիկական բնութագրերի պահանջներին բավարարում է միայն APC արտադրող ընկերության անխափան սնուցման աղբյուրները: Կառավարության որոշման հավելված 1-ի կարգի 31-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն. յուրաքանչյուր ոք իրավունք ունի մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին ներկայացնել հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ առանց նշելու անունը-ազգանունը:

Պարզաբանում N 1: Հարգելի հնարավոր մասնակից, ի պատասխան Ձեր հարցմանը հայտնում ենք հետևյալը՝

«Գնումների մասին» ՀՀ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

Նույն Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝

Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Նույն Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Նույն Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝

Գնման առարկայի բնութագրերը

1. պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 22-րդ կետի համաձայն՝

22. գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով և նույն կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ նախատեսված՝ պատվիրատուի ղեկավարի հետ համաձայնեցված դեպքերում կատարվող գնումների:

Հաշվի առնելով վերոգրյալը, գտնում ենք, որ

1. Պատվիրատուն ինքնուրույն է որոշում և համապատասխանաբար կազմում իր կարիքների համար անհրաժեշտ գնման առարկայի տեխնիկական բնութագիրը՝ պահպանելով գնումների մասին օրենսդրության պահանջները:

2. Ընթացակարգի 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժիններով սահմանված ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերը կազմված են ելնելով պատվիրատուի իրական կարիքներից, պահպանելով գնումների օրենսդրության վերոնշյալ պահանջները և չեն պարունակում որևէ հղում:

3. Ձեր կողմից հարցմամբ չի ներկայացվել, թե գնման ընթացակարգի հրավերի 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժիններով սահմանված տեխնիկական բնութագրերի մասնավորապես որ չափորոշիչը,

կամ չափորոշիչներն են սահմանափակում մրցակցությունը, և բացի գրավոր հայտարարությունից չեն ներկայացվել սահմանված տեխնիկական բնութագրով ապրանքների միայն մեկ արտադրողին համապատասխանության որևէ հիմնավորում: Բացի այդ, գործող գնումների օրենսդրությամբ չեն սահմանվում ապրանքի տեխնիկական բնութգրին մեկ արտադրողի համապատասխանության որևէ սահմանափակումներ:

4. Որևէ ապրանքի կամ ապրանքների արտադրողի կամ արտադրողների կողմից ՀՀ տարածքում մեկ կամ մի քանի ներկայացուցիչ ունենալը գնումների օրենսդրությամբ չի սահմանափակում այդ արտադրողի կամ արտադրողների կամ վերջիններիս ներկայացուցիչների մասնակցությունը գնման ընթացակարգերին:

5. Միաժամանակ հայտնում ենք, որ հրավերի տեխնիկական բնութագիր հավելվածում բոլոր ապրանքատեսակների մասով սահմնված է հետևյալ պայմանը՝

***Եթե որևէ չափաբաժնով սահմանված տեխնիկական բնութագրերում առկա են հղումներ ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին, կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին ապա կիրառական է «կամ համարժեք» արտահայտությունը:**

Վերոնշյալով պայմանավորված հայտնում ենք, որ եթե հարցումը կատարված է մասնակցության նպատակով և հնարավոր մասնակիցը գտնում է, որ իր մասնակցությունը սահմանափակվում է ընթացակարգի հրավերի ցանկացած, այդ թվում նաև 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժիններով սահմանված տեխնիկական բնութագրի այն հատկանիշներով, որոնք իր համոզմամբ և հետագայում հստակ հիմնավորմամբ պարունակում են հղում կամ հղումներ ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին, կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, ապա այդ հատկանիշների մասով կիրառական է «կամ համարժեք» արտահայտությունը, պայմանով, որ որպես համարժեք առաջարկվող հատկանիշները պետք է համարժեք լինեն պատվիրատուի այն կարիքին, որի բավարարման նպատակով իրականացվում է տվյալ գնման գործընթացը:

6. Հրավերով սահմանված է նաև, որ ապրանքների գնման դեպքում ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

7. Հրավերի 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում անգլերեն լեզվով սահմանված չափորոշիչները հիմնականում համարվում եմ **միջազգային** տերմիններ, որոնց հայերեն թարգմանված տարբերակները կարող են երկակի մեկնաբանվել մասնակիցների կողմից և որոնք ոչ մի դեպքում չեն կարող սահմանափակել հնարավոր մասնակիցների մասնակցությունը:

Հարցադրում N 2: Հարգելի գործընկերներ՝ 6 չափաբաժնի տեխնիկական բնութագրում Անխափան սնուցման սարքի Typical recharge time: նշված է 1 ժամ, իսկ Battery Charge Power (Watts) նշված է 837 Watts: Ընդունելի են արդյոք հետևյալ չափանիշները՝ Typical recharge time: 1.5 ժամ, իսկ Battery Charge Power (Watts) հզորությունը՝ 560 Watts: Կանխավ շնորհակալություն

Պարզաբանում N 2: Հարգելի գործընկեր, պարզաբանում չի տրամադրվում, քանի որ հարցումը վերաբերվում է Մասնակցի կողմից առաջարկվելիք ապրանքների տեխնիկական բնութագրերի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերի համարժեքության համապատասխանությանը: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ հրավերով սահմանված են տեխնիկական բնութագրի նվազագույն պահանջները:

Հարցադրում N 3: Հարգելի Պատվիրատու; Խնդրում եմ պարզաբանել. Գնման առարկայի տեխնիկական բնութագրում 32-րդ, 33-րդ, 34-րդ և 35-րդ չափաբաժիններում նշված ապրանքները քանի՞ տեղանոց են, ի՞նչ կատեգորիա են , UTP թե՞ FTP են:

Պարզաբանում N 3: Հարգելի գործընկեր, հրավերով սահմանված են 32-րդ, 33-րդ, 34-րդ և 35-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերի նվազագույն պահանջները, և մասնակցի կողմից առաջարկվելիք ապրանքների տեխնիկական բնութագրերը պետք է բավարարեն հրավերով սահմանված բնութագրերի նվազագույն պահանջներին: Բացի այդ, հրավերով հստակ սահմանված են 32-րդ, 33-րդ, 34-րդ և 35-րդ չափաբաժինների տեղերի քանակները, համապատասխանաբար՝ 1, 2, 1 և 2 տեղանոց: Եթե ցանկացած այլ չափորոշիչ սահմանված չէ հրավերով, ապա գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվելու են միայն հրավերով սահմանված չափորոշիչները:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԷԱՃԱՊՁԲ-2024/8-3-ԵՊԲՀ» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Լիլիթ Մկրտչյանին:

Հեռախոս՝ 091 837215

Էլեկտրանային փոստ՝ marketing.ysmu9@gmail.com:

ԷԱՃԱՊՁԲ-2024/8-3-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով՝

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Գ. Բաղդասարյան

Հանձնաժողովի անդամ՝

_____ Ս. Առաքելյան

_____ Ա. Կարապետյան

ОБЪЯВЛЕНИЕ
о разъяснении приглашения

Настоящий текст объявления утвержден решением Оценочной комиссией № 3 от 07.03.2024 года и опубликовывается в соответствии со статьей 29 Закона Республики Армении «о Закупах».

Код процедуры «ԷԱՃԱՊՁԲ-2024/8-3-ԵՊԲՀ»

Оценочная комиссия по процедуре закупки под кодом «ԷԱՃԱՊՁԲ-2024/8-3-ԵՊԲՀ», организованной с целью приобретения компьютеров, компьютерных устройств и аксессуаров для нужд фонда «Ереванский государственный медицинский университет имени Мхитара Гераци», ниже предоставляет запрос полученный от 05.03.2024 года относительно приглашения с тем же кодом и разъяснение по нему, предоставленное, 07.03.2024 года

Вопрос 1: Уважаемый партнер, Пожалуйста, предоставьте разъяснения по следующим лотам:
- Лоты № 6, 7 и 8. В технической характеристике, представленной Вами в армянском тексте Приглашения, составлены на английском языке, что нарушило требования части 1 статьи 14 Закона РА «О закупках».
Пожалуйста, произведите соответствующие переводы и внесите изменения. -
Лоты №6, 7 и 8 . В технической характеристике закупаемого товара отсутствуют критерии «не больше» и «не меньше». Таким образом, нарушаются требования части 2 статьи 13 Закона РА «О закупках», согласно которым характеристики предмета закупки
- 1)должны обеспечивать равные условия конкуренции для потенциальных участников;
- 2)не должно приводить к возникновению необоснованных препятствий конкуренции в процессе закупок; -
3) должно быть объективно оправдано и адекватно потребности, для удовлетворения которой совершается данная покупка; -
4) содержать полное и адекватное описание характеристики, технических данных предмета закупки, а в случае работ - также перечень объемов, график и другие неценовые условия. Пожалуйста, внесите изменения, чтобы разрешить более чем одному человеку участвовать в процессе покупки, внеся соответствующие изменения. -
В соответствии с пунктом 22 постановления Правительства Республики Армения от 4 мая 2017 года № 526-Н при определении характеристик предмета закупки следует учитывать, что более чем один потенциальный участник должен удовлетворять их..... -
- Лоты №6, 7 и 8. Технические характеристики указанные вами соответствуют только источнику бесперебойного питания производства APC. Согласно подпункту 25 пункта 31 приказа приложения 1 постановления правительства. каждый имеет право до истечения срока внесения изменений в приглашение представить секретарю оценочной комиссии обоснования по электронной почте с точки зрения характеристик объекта закупки, указанных в приглашении, требований к обеспечение конкуренции и исключение дискриминации, предусмотренной законом, без указания имени и фамилии.

Разъяснение N 1: Уважаемый возможный участник, в ответ на ваш запрос сообщаем следующее:

В соответствии с пунктом 1 части 3 статьи 3 Закона РА «О закупках»:

1. Целью настоящего Закона является обеспечение в процессе закупок ценности в обмен на компенсацию, а именно:

1) приобретение товаров, работ и услуг, необходимых для выполнения возложенных на заказчика полномочий, с равноценной оплатой.

В соответствии с пунктом 3 части 2 статьи 3 того же закона:

Процесс закупок базируется на следующих принципах:

3) для любого лица, независимо от того, является ли оно иностранным физическим лицом, организацией или лицом без гражданства, равноправие участия в процессе закупки.

В соответствии с частью 1 статьи 7 того же закона:

1. Любое лицо, независимо от того, является ли оно иностранным физическим лицом, организацией или лицом без гражданства, имеет равное право участвовать в процессе закупки.

В соответствии с частями 1, 3, 4 и 5 статьи 13 того же закона:

Характеристики предмета закупки

1. в договоре должны полностью и четко описываться характеристики приобретаемого товара, работы или услуги, условия их приобретения и оплаты, исключая разнообразную интерпретацию.:

4) включают полное и равноценное описание спецификации предмета закупки, технических данных, а в случае работ-также объемного листа работ, графика и других неценовых условий:

3. Исходя из специфики предмета закупки, их характеристики по возможности включают четкое описание условий, относящихся к качеству, стандарту, безопасности, условным знакам, терминологии, упаковке, разгрузке, размеру, проектам приобретаемого товара, работы или услуги, на основе международных стандартов и действующих в Республике Армения нормативно-технических документов, стандартов, а в случае их отсутствия-временных технических условий:

5. Характеристики предмета закупки не должны содержать претензий или ссылок на какой-либо товарный знак, торговое название, патент, эскиз или модель, страну происхождения или конкретный источник или производителя, за исключением случаев, когда характеристика предмета закупки без них невозможна.

Согласно пункту 22 Порядка организации процесса закупок, утвержденного постановлением Правительства РА № 526-Н:

22. при определении характеристик предмета закупки необходимо учитывать, что их должны удовлетворять более одного возможного участника, за исключением закупок, осуществляемых на основании, предусмотренном подпунктом 4 пункта 23 настоящего Порядка, и в случаях, предусмотренных абзацем «г» подпункта 1 пункта 21 того же порядка, в согласованных с руководителем заказчика случаях:

Учитывая вышесказанное, мы считаем, что

1 Заказчик самостоятельно определяет и соответственно составляет необходимую для своих нужд техническую характеристику предмета закупки, соблюдая требования законодательства о закупках.

2 Технические характеристики установленные лотом 6, 7 и 8 процедуры, составлены исходя из реальных потребностей заказчика, с соблюдением вышеуказанных требований законодательства о закупках и не содержат ссылки.

3 По вашему запросу не было представлено, какой критерий или критерии, в частности, технической характеристики, установленной лотом 6, 7 и 8 приглашения на процедуру закупки, ограничивают конкуренцию, и кроме письменного заявления не было представлено какое-либо обоснование соответствия товара только одному производителю с определенной технической характеристикой.

4 Наличие на территории РА одного или нескольких представителей какого-либо товара или производителя или производителей товаров не ограничивает участие данного производителя или производителей или их представителей в закупочных процедурах.

5 В то же время сообщаем, что в приложении к технической характеристике приглашения по всем товарам предусмотрено следующее условие:

Если в технических характеристиках, определенных какой-либо дозой, имеются ссылки на торговое название, патент, эскиз или модель, страну происхождения, конкретный источник или производителя, то применяется фраза «или эквивалент».

В связи с вышеизложенным сообщаем, что если запрос сделан с целью участия и возможный участник считает, что его участие ограничивается теми признаками любой технической характеристики приглашения на процедуру, в том числе, предусмотренными лотом 6, 7 и 8, которые, по его убеждению и в дальнейшем с четким обоснованием, содержат ссылку или ссылки на фирменное наименование, патент, эскиз или модель, страну происхождения или конкретный источник или производителя, то по этим признакам применяется выражение "или равноценное",, что предлагаемые в качестве эквивалента качества должны быть соизмеримы с той потребностью заказчика, для удовлетворения которой осуществляется данный процесс закупки:

6 В приглашении также установлено, что в случае покупки товаров оценочная комиссия оценивает также соответствие полных описаний представленного товара требованиям приглашения.

7. Считаю международными терминами стандарты, определенные на английском языке в технических характеристиках 6-й, 7-й и 8-й лотов приглашения, версии которых, переведенные на армянский язык, могут быть двояко истолкованы участниками и которые ни в коем случае не могут ограничивать участие потенциальных участников.

Вопрос 2: Уважаемые коллеги, техническая характеристика лота №6 источник бесперебойного питания. типовое время перезарядки, указано 1 час, а мощность заряда аккумулятора (Вт) указана как 837 Вт. Заранее спасибо

Разъяснение N 2: Уважаемый партнер, никаких разъяснений не предоставляется, так как в запросе говорится об адекватности технических характеристик продукта, который будет предложен участником. При этом сообщаем, что минимальные требования технического задания определены приглашением.

Вопрос 3: Уважаемый Заказчик; Просьба уточнить. В технической характеристике предмета закупки в указанные в лотах№ 32, 33, 34 и 35, на сколько мест рассчитаны изделия, какой они категории, UTP или FTP?

Разъяснение N 3: Уважаемый партнер, сообщаем Вам, что минимальные требования технических характеристик лотов № 32, 33, 34 и 35 определеных приглашением, а технические характеристики товара, предлагаемой Участником, должны соответствовать только минимальным требованиям технические характеристики, указанные в приглашении. Также сообщаем Вам, что в технических характеристиках лотов № 32, 33, 34 и 35, указано количество розеточных мест, соответственно: 1, 2, 1 и 2 места. Если в приглашении не указаны какие-либо другие критерии, оценочной комиссией будут оцениваться только критерии, указанные в приглашении.

Для получения дополнительной информации в связи с обьявлением можно обратится к секретарю оценочной комиссии по процедуре закупки под кодом «ԷԱՃԱՊՁԲ-2024/8-3-ԵՊԲՀ» Лилит Мкртчян:

Телефон 091 837215

Электронная почта marketing.ysmu9@gmail.com:

Оценочная комиссия по котировке цен по процедуре закупа - «ԷԱՃԱՊՁԲ-2024/8-3-ԵՊԲՀ»

Председатель комиссии _____ Г. Багдасарян

Члены комиссии

_____ С. Аракелян

_____ А. Карапетян